

**ՀՀ 2027 ԹՎԱԿԱՆԻ  
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

**Հայտատու մարմինը՝**

**Հանրային հեռարձակողի խորհուրդ**

## 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանրային հեռարձակողի խորհրդի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հիմք է հանդիսանում «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռարձակողի խորհրդին ամրագրված լիազորությունների շրջանակներում «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Հանրային հեռարձակողներ) ընդհանուր կառավարումը և հսկողությունը:

Հանրային հեռարձակման ռազմավարական նպատակն է ստեղծել և տարածել հանրային նշանակության վստահելի տեսալսողական (մեդիա) բովանդակություն, որը նպաստում է գիտակից և տեղեկացված հասարակության ձևավորմանը, աջակցում է երկրի անվտանգությանը, տնտեսական առաջընթացին, սոցիալական արդարության հաստատմանը, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը և քաղաքացիների կյանքի բարելավմանը:

Հանրային հեռարձակողի խորհրդի և նրա կառավարման ներքո գտնվող ընկերությունների գործունեության հիմքում դրված են ՀՀ Սահմանադրության, «Տեսալսողական մեդիայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Լեզվի մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Գովազդի մասին» ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

Հանրային հեռարձակողի խորհուրդն իր լիազորությունների սահմաններում համակարգում և վերահսկում է հետևյալ նպատակների իրագործումը.

- ապահովել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվության ստեղծումն ու տարածումը, ինչպես ուղիղ հեռարձակման, այնպես էլ արբանյակային և ինտերնետային սփռման միջոցներով,
- ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային բովանդակություն,

- տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին,
- լուսաբանել պետական իշխանության մարմինների և հանրային կառույցների գործունեության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները,
- ապահովել խոսքի ազատության, բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ՝ ձևավորելով հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր, վարքագծի օրինակներ,
- կրթական, ճանաչողական, մշակութային և մանկական հաղորդումների միջոցով նպաստել հասարակության բարոյական և մարդկային հատկանիշների զարգացմանը, աջակցել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը,
- Սփյուռքի մեր հայրենակիցներին ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքական և մշակութային կյանքը, ներգրավել և մասնակից դարձնել հայաստանյան և համազգային ձեռնարկներին՝ նպաստելով Հայաստան-Սփյուռք կապերի արդյունավետությանը:

Վերը նշված ծրագրի նպատակները, վերջնական արդյունքները, չափորոշիչները և թիրախային ցուցանիշները, ինչպես նաև կապը ՀՀ Կառավարության ծրագրի պահանջների հետ ներկայացված է աղյուսակ 1-ում (Հավելված 3-ի Մաս 3):

«Պետական մարմնի ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները»

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				Կապը ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ գործող այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված ՀՀ կառավարության քաղաքականության նպատակների և թիրախների հետ	Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ	
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը			
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը			Ժամկետը
<p>Ստեղծել և տարածել հանրային նշանակության վստահելի տեսալսողական (մեդիա) բովանդակություն: Ապահովել մեդիաբովանդակության տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային բազմազանությունը: Տրամադրել հավաստի, անաչառ, չեզոք, բազմակողմանի լրատվություն և որակյալ վերլուծություն՝ Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ: Ապահովել խոսքի ազատության, բազմակարծության, այլընտրանքային կարծիքի արտահայտման հարթակ:</p>	<p>1042 - Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում</p>	<p>Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի օրիգինալ /նոր/ հաղորդումների տարեկան ժամաքանակ, չափման միավոր՝ ժամ</p>	2 893	2026	2 893	2027	<p>Հանրային հեռարձակողի խորհրդի ծրագրի նպատակները կապված են ՀՀ կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով</p>	<p>Հանրային հեռարձակողի խորհրդի ծրագրի նպատակները կապված են ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով:</p>
		<p>Հանրային հեռուստաընկերության հաղորդումների բազմազանությունը ըստ հաղորդաշարերի քանակի, չափման միավոր՝ հաղորդաշար</p>	55	2026	55	2027		
		<p>Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի եթերում օրիգինալ /նոր/ հաղորդումների ապահովում, չափման միավորը՝ ժամ</p>	4 205	2026	3 800	2027		

## 2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

2027-2029 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար	Հիմնավորումներ
Տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային մեդիաբովանդակության բազմազանության ապահովում:	Հանրային հեռարձակողի խորհրդի ծրագրի նպատակները կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով:
Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր հասարակական-քաղաքական իրադարձությունների մասին հավաստի, անաչառ, բազմակողմանի լրատվության ապահովում:	
Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության եթերներով օրիգինալ հաղորդումների տեսակարար կշռի ավելացում	
Ինտերնետ հարթակներում տեսալսողական բովանդակության բարձր դիտելիության ապահովում	

## 3. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 3.1. Բազային բյուջեի գնահատում

Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվում է 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» բյուջետային ծրագիրը, որի միջոցառումներն են.

- 11001 «Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ», որն իրականացվում է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի միջոցով,
- 11002 «Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ», որն իրականացվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11003 «Ռադիո ծառայություններ», որն իրականացվում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11007 «Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ»,

- 31001 «Հանրային հեռարձակողի խորհրդի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում», որն իրականացվում է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի միջոցով,
- 32004 «ԶԺՀ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում», որն իրականացվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 32006 «Ներդրումներ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով», որն իրականացվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 32007 «Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով», որն իրականացվում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 32008 «Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով», որն իրականացվում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով:

Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող ծրագրի համար ընդհանուր առմամբ «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հատկացվել է 8,374.1 մլն.դրամ, սակայն 2025թ. ՀՀ կառավարության 22.05.2025թ. N 636-Ն և 20.06.2025թ. N 811-Ն որոշումներով Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել են հավելյալ 115 մլն. դրամ (կապիտալ շինարարության համար) և 9.6 մլն.դրամ (ԶԺՀ-ի հետ համագործակցության շրջանակներում չինական կողմի վճարած և փոխհատուցման ենթակա հարկերի և պարտադիր վճարների փոխհատուցման նպատակով): Արդյունքում 2025 թվականին փաստացի Հանրային հեռարձակողի խորհրդին հատկացնել է 8,498.7 մլն.դրամ, որից օգտագործվել է 8,246.9 մլն.դրամ, 251.8 մլն.դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող ծրագրի համար հատկացվել 8,293.2 մլն.դրամ, ինչը 2025 թ.-ի փաստացի հատկացումներից 46.3 մլն.դրամով ավել է, որի հիմնական մասը պայմանավորված է՝

- 193.9 մլն.դրամի աճը՝ «Հանրային ռադիոյի հիմնադրման 100-ամյակի» միջոցման համար 2026թ. հավելյալ ֆինանսավորման հատկացմամբ,

- (81.6) մլն.դրամի կրճատումը՝ «ՉԺՀ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում» միջոցառման գծով շինարարական աշխատանքների ծավալի նվազմամբ,

-(64.0) մլն.դրամի կրճատումը՝ 2025թ. ՀՀ Կառավարության որոշմամբ Հանրային հեռուստաընկերության տանիքի վերանորոգման համար հավելյալ գումարի հատկացմամբ, որը 2026թ.-ին չի նախատեսվում:

2027թ.-ին Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող միջոցառումների իրականացման համար կպահանջվի **8,890.9 մլն.դրամ**, ինչը 597.8 մլն.դրամով ավել է «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված գումարից, 2028թ.-ին՝ **8,843.1 մլն.դրամ**, 2029թ.-ին՝ **7,945.6 մլն.դրամ** (բացվածքը ըստ միջոցառումների տե՛ս ստորև ներկայացված աղյուսակում):

- «**Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ**» միջոցառման գծով 2027-2029թ. պահանջվում է 202.1 մլն.դրամի տարեկան ֆինանսավորում, ինչը 2026թ.-ի հաստատված բյուջեի նկատմամբ ենթադրում է 34.5 մլն.դրամի աճ, որից՝

- 24.6 մլն. դրամի աճը պայմանավորված է նրանով, որ Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի հիմնական մասի դրույքաչափերը տևական ժամանակ չեն վերանայվել, առաջարկվում է վերջիններիս աշխատավարձի 15%-ի աճ, ինչը կկազմի 9.8 հազ. դրամ: Բացի այդ, ՀՀ կառավարության 12.02.2026թ. N 152-Ն որոշման պահանջներից ելնելով նախատեսվում է ավելացնել 2 հաստիք, որոնք կիրականացնեն տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի վարումը: Տարեկան ծախսը այս մասով կաճի 11.4 հազ. դրամով: Աշխատավարձի ֆոնդի աճին զուգընթաց նախատեսվում է նաև 3.4 մլն.դրամի պարզևատրման ֆոնդի աճ,

- 8.0 մլն. դրամի աճը պայմանավորված է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն սոցիալական հարցումների իրականացման անհրաժեշտությամբ,

- 1.5 մլն.դրամի աճը պայմանավորված է սոցիալական հարցումների և դրամաշնորհային ծրագրերի իրականացման շրջանակներում անհրաժեշտ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերմամբ,

- 0.4 մլն.դրամի աճը պայմանավորված է Եվրոպական հեռարձակողների միության անդամ Հանրային հեռարձակողների երկրների պատվիրակությունների հյուրընկալության ծախսերի ավելացմամբ:

- **«Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ» միջոցառման** գծով 2027-2029թթ. պահանջվում է 6,578.0 մլն.դրամի տարեկան ֆինանսավորում, ինչը հավասար է 2026թ.-ի ՀՀ պետական բյուջեով սահմանված հատկացումներին:

- **«Ռադիո ծառայություններ» միջոցառման** գծով 2027-2029թթ. համար պահանջվում է տարեկան 1,068.0 մլն.դրամի ֆինանսավորում, ինչը 2026թ. հաստատված բյուջեի նկատմամբ ենթադրում է տարեկան 97.1 մլն.դրամի հավելյալ ֆինանսավորում՝ հիմնականում պայմանավորված «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի աշխատակիցների աշխատավարձերի կանխատեսվող բարձրացմամբ (աշխատավարձի շուրջ 7%-ով բարձրացմամբ), քանի որ ներկայիս միջին ամսական աշխատավարձը կազմում է շուրջ 192.2 հազար ՀՀ դրամ (ներառյալ հարկերը) ինչը էական ցածր է հանրապետության միջին աշխատավարձերի մակարդակից, ինչպես նաև նոր աշխատատեղերի ավելացմամբ՝ տեսաարտադրանքի ընդլայնման անդյունքում:

- **«Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ» միջոցառման** գծով 2027-2029թ. պահանջվում է 8.2 մլն.դրամի տարեկան ֆինանսավորում, ինչը 2026թ. հաստատված բյուջեի համեմատ ենթադրում է տարեկան 1.0 մլն.դրամի ֆինանսավորման կրճատում, քանի որ «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի լուծարման արդյունքում հետագայում ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ չի պահանջվի:

- **«ՉԺՀ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում» միջոցառման** գծով 2027թ. պահանջվում է 43.4 մլն.դրամի տարեկան ֆինանսավորում: Նշված գումարով նախատեսվում է ավարտին հասցնել ՉԺՀ-ի կողմից «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ԱՍԲ-8 մասնաշենքի կառուցման շրջանակներում ընկերության անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովման միջոցառումը, որի ընդհանուր արժեքը 2023-2027թթ. կազմում է 1.2 մլրդ.դրամ:

**2027-2029 թվականների համար սահմանված կողմնորոշիչ չափաքանակները՝ բաշխած ըստ միջոցառումների**

ՀՀ	Միջոցառման անվանում	2025թ. փաստացի բյուջե	2026թ. հաստատված բյուջե	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2027-2029թթ. համար սահմանված կողմնորոշիչ չափաքանակները՝ բաշխած ըստ միջոցառումների			2027-2029թթ. ֆինանսավորման հայտ			Տարբերություն ֆինանսավորման հայտի և կողմնորոշիչ չափաքանակի միջև		
				2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.
1	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ	167,685.8	167,593.3	159,613.3	159,613.3	159,613.3	202,106.9	202,106.9	202,106.9	42,493.6	42,493.6	42,493.6
2	Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ	6,579,116.4	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	-	-	-
3	Ռադիո ծառայություններ	970,944.4	970,944.4	970,944.4	970,944.4	970,944.4	1,068,038.8	1,068,038.8	1,068,038.8	97,094.4	97,094.4	97,094.4
4	Կրթական-մշակութային ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ	221,105.5	221,105.5	221,105.5	221,105.5	221,105.5	-	-	-	-221,105.5	-221,105.5	-221,105.5
5	Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ	9,200.0	9,200.0	9,200.0	9,200.0	9,200.0	8,200.0	8,200.0	8,200.0	-1,000.0	-1,000.0	-1,000.0
6	Հանրային հեռարձակողի խորհրդի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	806.8	-	637.8	637.8	-	637.8	637.8	-	-	-	-

ՀՀ	Միջոցառման անվանում	2025թ. փաստացի բյուջե	2026թ. հաստատված բյուջե	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2027-2029թթ. համար սահմանված կողմնորոշիչ չափաքանակները՝ բաշխած ըստ միջոցառումների			2027-2029թթ. ֆինանսավորման հայտ			Տարբերություն ֆինանսավորման հայտի և կողմնորոշիչ չափաքանակի միջև		
				2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.
7	ՉԺՀ-ի հետ համագործակցությամբ շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում	234,071.4	152,434.9	43,405.4	-	-	43,405.4	-	-	-	-	-
8	Ներդրումներ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով	-	-	-	-	-	900,000.0	900,000.0	-	900,000.0	900,000.0	-
9	Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով	-	-	-	-	-	80,540.2	62,288.4	56,238.0	80,540.2	62,288.4	56,238.0
10	Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով	-	-	-	-	-	10,000.0	23,821.4	33,000.0	10,000.0	23,821.4	33,000.0

ՀՀ	Միջոցառման անվանում	2025թ. փաստացի բյուջե	2026թ. հաստատված բյուջե	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2027-2029թթ. համար սահմանված կողմնորոշիչ չափաքանակները՝ բաշխած ըստ միջոցառումների			2027-2029թթ. ֆինանսավորման հայտ			Տարբերություն ֆինանսավորման հայտի և կողմնորոշիչ չափաքանակի միջև		
				2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.
11	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ կապիտալ շինարարական աշխատանքների իրականացում	63,964.0	-	-	-	-	-	-	-	-	-	-
12	«Հանրային ռադիոյի հիմնադրման 100-ամյակի» միջոցառումների իրականացում	-	193,875.0	-	-	-	-	-	-	-	-	-
	<b>Ընդամենը</b>	<b>8,246,894.3</b>	<b>8,293,170.2</b>	<b>7,982,923.5</b>	<b>7,939,518.1</b>	<b>7,938,880.3</b>	<b>8,890,946.3</b>	<b>8,843,110.5</b>	<b>7,945,600.9</b>	<b>908,022.8</b>	<b>903,592.4</b>	<b>6,720.6</b>

### 3.2. Նոր նախաձեռնություններ

2027թ. նախատեսվում է կապիտալ բնույթի հետևյալ նոր նախաձեռնությունները՝

- **31001 «Հանրային հեռարձակողի խորհրդի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառման** գծով 2027-2028 թվականին պահանջվում է 637.8 հազ.դրամի ֆինանսավորում՝ վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար:

- **32006 «Ներդրումներ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառման** գծով 2027-2028թ. պահանջվում է 1.8 մլրդ.դրամի ֆինանսավորում, ինչը անհրաժեշտ է ընկերության եթերային սարքասրահը ամբողջությամբ նորով փոխարինելու համար: Գործող եթերային սարքասրահի վերազինման աշխատանքներ շուրջ 9 տարի չեն կատարվել, քանի որ համակարգի սպասարկման ու վերազինման համար անհրաժեշտ սարքավորումներն ու պահեստամասերը իսկ արտադրությունից դուրս են եկել: Վերջին տարիներին հաճախ են ի հայտ գալիս համակարգի խափանումներ, ինչը ռիսկ է պարունակում եթերի դադարեցման: Ընկերության տեխնիկական անձնակազմի կողմից ժամանակ առ ժամանակ փորձեր են կատարվում խափանումների ընթացքում կիրառել ժամանակավոր լուծումներ, սակայն այն չի երաշխավորում համակարգի ամբողջական աշխատանքի անընդհատությունը: Վերազինումը կիրականացվի փուլերով՝ 2027-2028թթ. ընթացքում տարեկան 900.0 մլն.դրամի ֆինանսավորմամբ: Միաժամանակ նշենք, որ ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի առաջնահերթությունների 6-րդ հավելվածով սույն նպատակով 900.0 մլն.դրամը նախատեսված է:

- **32007 «Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառում:** Հանրային ռադիոընկերության ռադիոտեխնիկական համալիրի տեխնիկական վերազինումն վերջին անգամ իրականացվել է 2004-2005թթ., և Ընկերությունը կարիք ունի

համալիր տեխնիկական վերազինման՝ 352.9 մլն.դրամի չափով՝ հետևյալ հիմնական ուղղություններով:

- **Տեսաձայնային արտադրության տեխնիկական** առ այսօր շահագործվում է առանց ընդհատումների՝ հիմնականում շուրջօրյա ռեժիմով: Տեխնիկական միջոցների շահագործման ընթացքում պարբերաբար ի հայտ են գալիս խափանումներ և թերություններ, որոնք շտկելու կամ նորոգելու համար անհրաժեշտ են լինում ոչ ստանդարտ լուծումներ, քանի որ սարքավորումների հիմնական մասն արտադրությունից հանված է, և հնարավոր չէ ձեռք բերել սարքերի փոխարինող մոդուլներ կամ բլոկներ: Միևնույն ժամանակ օգտագործվող տեխնոլոգիաները հին են, և առկա են խոչընդոտներ՝ ժամանակակից որակի և լուծումներով տեսաձայնային արտադրություն կազմակերպելու համար: Ընկերության արտադրանքը համացանցում, մասնավորապես սոցիալական ցանցերում, սփռելը լուրջ մարտահրավեր է, քանի որ ստուդիաների մեծ մասը միայն ձայնային է, կամ առկա է ցածրորակ տեսատեխնիկա: Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է իրականացնել թվային տեխնոլոգիաներով հագեցած վերազինում՝
  - **Կենտրոնական սարքասրահում** – 74.0 մլն.դրամի (տեսաձայնային արտադրության կենտրոնական հանգույցն է, որտեղ բոլոր ստուդիաներից ստացված ազդանշանները վերամշակվում, հզորացվում և ուղղորդվում են դեպի հեռարձակում),
  - **Հինգ տեսաստուդիաներում** – 151.9 մլն.դրամի (լրատվական-վերլուծական ծրագրերի արտադրության ստուդիա, ուղիղ եթերով թողարկվող հաղորդումների ստուդիա, պոդքաստների արտադրության ստուդիա, Ընկերության երկրորդ՝ երիտասարդական ալիքի ընդհանուր ստուդիա, Ընկերության երրորդ՝ մանկապատանեկան ալիքի ընդհանուր ստուդիա),
  - **Հինգ ձայնային ստուդիաներում** – 57.3 մլն.դրամի (միայն ձայնային հաղորդումների արտադրության ու մոնտաժի ստուդիաներ):

Այս վերազինման աշխատանքների արդյունքում առկա սարքավորումները կփոխարինվեն նոր և արդիական սարքավորումներով, արդյունքում շեշտակի կնվազեն հեռարձակման խափանումները, կբարելավվի ձայնագրման և տեսաձայնային արտադրանքի որակը:

- **Արտագնա նկարահանման տեխնիկայի** բացակայությունը թույլ չի տալիս իրականացնել որակյալ արտագնա նկարահանումներ տեսահաղորդաշարերի համար, ինչպես նաև ապահովել ուղիղ միացումներ լրատվական հաղորդումների համար: Ուստի անհրաժեշտ է ձեռք բերել առնվազն երեք բարձրակարգ տեսախցիկ, տեսաձայնային խառնիչ վահանակ, ինչպես նաև ուղեկցող այլ տեխնիկական միջոցներ (խոսափողներ, ականջակալներ, շտատիվներ, ուժեղացուցիչներ և այլն), որի համար ընդհանուր առմամբ կպահանջվի 13.5 մլն.դրամ:
- Անհրաժեշտ է իրականացնել **հեռարձակման սարքավորումների** (տեղակայված Երևան քաղաքի հեռուստաաշտարակում) հզորացում՝ 56.2 մլն.դրամի: Ընկերության երեք ալիքների (Առաջին ծրագիր, Երկրորդ՝ Երիտասարդական «Իմ Ռադիո» ծրագիր, Երրորդ՝ «Արևիկ» մանկապատանեկան ծրագիր) սփռման ռադիոազդանշանի հզորացման նպատակով անհրաժեշտ է հզորացնել հեռարձակիչները, ուժեղարարները, ալեցիրները, միևնույն ժամանակ վերջիններս տեղափոխել հեռուստաաշտարակի ավելի բարձր մակարդակ (130մետրից տեղափոխելով շուրջ 210մետրի):

Նշված վերազինումը նախատեսվում է իրականացնել փուլային, ինչի համար 2026թ-ին անհրաժեշտ կլինի հավելյալ 153.8 մլն.դրամ (ինչի համար նախատեսում ենք հավելյալ դիմել ՀՀ կառավարություն՝ Հանրային հեռարձակողի խորհրդի մեկ այլ միջոցառման գումարից այս միջոցառմանը գումարի վերաբաշխման համար), 2027թ.-ին՝ 80.6 մլն.դրամ, 2028թ.-ին՝ 62.3 մլն.դրամ, իսկ 2029թ.-ին՝ 56.2 մլն.դրամ:

- **32008 «Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով» միջոցառում:**

2026-2029թթ. նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ 111.6 մլն.դրամի հիմնանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝

- Նոր տեխնոլոգիաների ներդրումը պետք է ուղեկցվի հինգ **ստուդիաների վերակառուցմամբ և տեսաարտադրության ապահովման համար անհրաժեշտ լուծումներով վերանորոգմամբ և կահավորմամբ:** Նախատեսվում է մեծացնել տեսաստուդիաների տարածքը՝ հարակից հատվածների հաշվին կադրում ճիշտ խորություն ապահովելու համար: Հարկավոր է նաև ապահովել ավելացված տարածքի ձայնամեկուսացումը և արձագանքամեկուսացումը: Տեսաարտադրության համար անհրաժեշտ է ապահովել նաև համապատասխան լուսային լուծումներ, գեղեցիկ ետնամաս ու կահավորում (**20.0 մլն.դրամ**),
- **Ընկերության ձայնային Ոսկե ֆոնդը.** Հանրային ռադիոյի 100-ամյա պատմության ընթացքում կատարված ձայնագրությունները, չնայած առկա թվայնացմանը, պահպանվում են նաև առաջնային՝ մագնիսական ժապավենների վրա: Մագնիսական ժապավենների պահոցը գտնվում է Ընկերության նկուղային հարկում, որը երկար տարիներ չի վերանորոգվել: **Տարածքի ներկայիս վիճակը ռիսկային է ժապավենների երկարատև պահպանման համար:** Ուստի Ընկերության ոսկե ֆոնդի մագնիսական ժապավենների երկարակեցության ապահովման համար անհրաժեշտ է վերանորոգել և կահավորել նկուղը և ապահովել օդի որակական անհրաժեշտ հատկանիշները (**34.8 մլն. դրամ**),
- Ռադիոտան **շենքի արտաքին քիվը** ունի վերանորոգման կարիք. հարկավոր է վերականգնել փլուզված հատվածը, ինչպես նաև կանխարգելել հետագա փլուզումները (**9.0 մլն.դրամ**),
- **Ավտոտնակների և հարակից պարսպի հատվածը** գտնվում են խիստ անբարվոք վիճակում: Ընկերության տարածքում գտնվող չորս ավտոտնակները հիմնականում վնասված տանիքի պատճառով նպատակային նշանակությամբ օգտագործման համար դարձել են ոչ

պիտանի: Ավտոտնակներին կից պարսպի հատվածը հողմահարման արդյունքում վնասված է, առկա են փլուզված հատվածներ: Անհրաժեշտ է վերակառուցել ավտոտնակների տանիքը և կատարել որոշակի ներքին հարդարման աշխատանքներ, որի արդյունքում նշված տարածքները կծառայեն Ընկերության գույքի պատշաճ պահպանմանը: Քանդված պարիսպների վերանորոգումը կնվազեցնի տարածքի անվտանգային ռիսկերը, **(14.8 մլն.դրամ),**

- **Ռադիոտան շենքի հյուսիսարևելյան հատվածի** երկրորդ և երրորդ հարկերը տևական ժամանակ չեն վերանորոգվել, և բնական մաշվածության հետևանքով վատթարացել է ընդհանուր հարդարման վիճակը: Առաջիկա տարիներին նշված երկու հարկերի վերանորոգումը դարձել է անխուսափելի **(33.0 մլն.դրամ):**

Նշված հիմնանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլային, ինչի համար 2026թ–ին անհրաժեշտ կլինի հավելյալ 44.8 մլն.դրամ (ինչի համար նախատեսում ենք հավելյալ դիմել ՀՀ կառավարություն), 2027թ.–ին՝ 10.0 մլն.դրամ, 2028թ.–ին՝ 23.8 մլն.դրամ, իսկ 2029թ.–ին՝ 33.0 մլն.դրամ:

### 3.3. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1042	11001	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
1042	11002	Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ	Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային հաղորդումների պատրաստում և հեռարձակում		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք

1042	11003	Ռադիո ծառայություններ	Ռադիո հաղորդումների պատրաստում և հեռարձակում		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
1042	11007	Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ	Հանրային հեռարձակողների ֆինանսատնտեսական գործունեության հիման վրա կազմված ՖՀՄՍ համապատասխան ֆինասական հաշվետվությունների աուդիտի անցկացում		«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1042	31001	Հանրային հեռարձակողի խորհրդի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Հանրային հեռարձակողի խորհրդի գործունեության համար անհրաժեշտ վարչական սարքավորումների ձեռքբերում		
1042	32006	«Ներդրումներ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով»	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում		
1042	32007	Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման նպատակով	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում		
1042	32008	Ներդրումներ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում		
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1042	32004	«ՉԺՀ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում»	Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից Հայաստանի հանրային հեռուստաընկերության 8-րդ տաղավարի (հեռուստաստուդիայի) կառուցման նպատակով Հայկական կողմի պարտավորությունների կատարում՝ օժանդակ ենթակառուցվածքների ապահովում		

#### 4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Բացի պետական բյուջեից ստացվող եկամուտներից, ոլորտի կազմակերպությունները եկամուտներ են ստանում նաև վճարովի ծառայությունների մատուցումից՝ գովազդից, վճարովի եթերաժամանակից, հովանավորչությունից, ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից, հեռարձակումից և վերահեռարձակումից, ինչպես նաև նախընտրական

քարոզչությունից և այլն (Ընկերությունների եկամուտների կանխատեսումը 2027-2029 թվականների համար տե՛ս հավելված 6-ում):

Վճարովի ծառայություններից ստացված եկամուտներն ուղղվում են կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմանը, շահութաբաժինների վճարմանը և այլ անհրաժեշտ ծախսերի իրականացմանը:

## 5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից իրականացվող ծրագրերը չեն առնչվում ՀՀ Կառավարության որոշումներով հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հետ (տե՛ս հավելված 5):

## 6. ՄԻՋՈՂՈՐՏԱՅԻՆ (ԽԱԶՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհուրդը 2027-2029 թվականների ընթացքում միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՄՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհուրդը 2027-2029 թվականների ընթացքում արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվող ծրագրեր չի նախատեսում:

## 8. ՄԻՋՆԱԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2027-2029 թվականների համար Հանրային հեռարձակողի խորհրդի միջոցառումների գծով ընդհանուր առմամբ նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար **8,890.9** մլն.դրամ, **8,843.1** մլն.դրամ և **7,945.6** մլն.դրամ, որի գծով ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է հավելված 8-ում:

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Հանրային հեռարձակողի խորհրդի 2027-2029 թվականների ՄԺԾԾ հայտում էական ռիսկեր, մասնավորապես՝ առանձին ծրագրերի հիմքում ընկած ենթադրությունների իրատեսականության հետ կապված անորոշություններ, որոնք կարող են բացասաբար ազդել ոլորտի ՄԺԾԾ հայտով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա չեն սպասվում:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# Հավելված N 1. Բյուջետային հայտի ամփոփ նկարագրություն

Պետական մարմնի անվանումը՝

Հանրային հեռարձակողի խորհուրդ

## 1. Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները՝

Հանրային հեռարձակողի խորհուրդը իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական նպատակները.

- ապահովել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվության ստեղծումն ու տարածումը, ինչպես ուղիղ հեռարձակման, այնպես էլ արբանյակային և ինտերնետային սփռման միջոցներով,
- ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային բովանդակություն,
- տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին,
- լուսաբանել պետական իշխանության մարմինների և հանրային կառույցների գործունեության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները,
- ապահովել խոսքի ազատության, բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ՝ ձևավորելով հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր, վարքագծի օրինակներ,
- կրթական, ճանաչողական, մշակութային և մանկական հաղորդումների միջոցով նպաստել հասարակության բարոյական և մարդկային հատկանիշների զարգացմանը, աջակցել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը,
- Սփյուռքի մեր հայրենակիցներին ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքական և մշակութային կյանքը, ներգրավել և մասնակից դարձնել հայաստանյան և համազգային ձեռնարկներին՝ նպաստելով Հայաստան-Սփյուռք կապերի արդյունավետությանը:

## 2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները՝

2027 թվականին բյուջետային ծրագրերում փոփոխություններ չեն նախատեսվում:

## 3. Կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները՝

2027 թվականին կապիտալ բնույթի միջոցառումներ չեն նախատեսվում:

## 4. Ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումները՝

2027 թվականին ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումներ չեն նախատեսվում:

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՐՄԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՊԻՆԵՐԸ

Պետական մարմնի անվանումը Հանրային հեռարձակողի խորհուրդ

Հազար դրամ

ԲԳՎ	Ծրագրի/միջոցառման դասիչը		ԲԳՎ/Ծրագրի /միջոցառման անվանումը	Ծրագրի նպատակը/միջոցառման նկարագրությունը	Միջոցառման տեսակը	Բյուջետային ծախսերը (հազ. դրամ)			Միջոցառման գծով բազային բյուջեն			Միջոցառման գծով առաջարկը ներառյալ բազային բյուջեի ընդլայնումները, նոր նախաձեռնությունները			Ծախսային ինյադրուցային գծով առաջարկը (-)			Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը	Հիմնավորումներ/ Պատճառներ (այդ թվում՝ 2026 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 2027թ. բազային բյուջեի տարբերության պատճառները ըստ հիմնական գործոնների)
	Ծրագիր	Միջոցառում				2025թ. (փաստացի)	2026թ. (հաստատված)	2026թ. (բազային)	2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>																			
	1042		<b>Ոստիկ և հեռուստատեսության հեռարձակում</b>			7,961,824.8	7,877,189.7	7,877,189.7	7,768,160.2	7,724,754.8	7,724,754.8	8,890,946.3	8,843,110.5	7,945,600.9					
		11001	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիթորինգ	Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիթորինգ	Ցառայությունների մատուցում	167,685.8	167,593.3	167,593.3	167,593.3	167,593.3	167,593.3	202,106.9	202,106.9	202,106.9				Պարտադիր	
		11002	Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային ծառայություններ	Ընդհանուր և լրատվական ուղղվածության հեռուստատեսային հարդուրումների պատրաստում և հեռարձակում	Ցառայությունների մատուցում	6,579,116.4	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1	6,578,017.1				Պարտադիր	
		11003	Ոստիկ ծառայություններ	Ոստիկ ծառայությունների պատրաստում և հեռարձակում	Ցառայությունների մատուցում	970,944.4	970,944.4	970,944.4	970,944.4	970,944.4	970,944.4	1,068,038.8	1,068,038.8	1,068,038.8				Պարտադիր	
		11007	Հանրային հեռարձակողների ֆինանսամեթոդների գործունեության աուդիտ	Հանրային հեռարձակողների ֆինանսամեթոդների գործունեության համակարգում, համակարգում և մոնիթորինգ	Ցառայությունների մատուցում	9,200.0	9,200.0	8,200.0	8,200.0	8,200.0	8,200.0	8,200.0	8,200.0	8,200.0				Պարտադիր	Փո.մարի կրճատումը պայմանավորված է նրանով, որ Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարման մեջ գործող իրավաբանական անձի կողմից հանրային հեռուստաընկերությունը ներկայումս գտնվում է լրծառման գործընթացում, և 2027-2029թթ. աուդիտի չի ենթարկվելու
		31001	Հանրային հեռարձակողի խորհրդի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Հանրային հեռարձակողի խորհրդի գործունեության համար անհրաժեշտ վարչական սարքավորումների մեթոդներ	Պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	806.8						637.8	637.8					Հայեցողական	
		32004	ՉԺԻ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կապիտալ շինարարության իրականացում	Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	234,071.4	152,434.9	152,434.9	43,405.4			43,405.4						Հայեցողական	
		32006	Ներդրումներ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման ճանապարհով	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ							900,000.0	900,000.0					Հայեցողական	
		32007	Ներդրումներ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման ճանապարհով	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ							80,540.2	62,288.4	56,238.0				Հայեցողական	
